<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ
Հասցե՝ Ք. Երևան, Ամիրյան 23/1
Էլեկտրոնային հասցե՝ bank@aeb.am
Կայք՝ www.aeb.am
Հեռախոս՝ (374 10) 8686, (374 10) 510 910
Ֆաքս՝ (374 10) 538 904

Հաստատված է <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Վարչության
<<03>> <<նոյեմբերի>> 2020թ. թիվ 210/01-03.11.20 որոշումով
Վարչության նախագահ՝
_____ Ա. Խաչատրյան

Ուժի մեջ է մտել՝ <<11>> <<նոյեմբերի>> 2020թ.
Հրապարակվել է՝ <<03>> << նոյեմբերի>> 2020թ.

<<<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ>> ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն տեղեկատվական ամփոփագրով (այսուհետ՝ Ամփոփագիր) սահմանվում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) միջնորդությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի (ՀԿԴ) ռեեստրի վարման և արժեթղթերի պահառության ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն) մատուցելու պայմանները և էական այլ տեղեկությունները:

1.**Ռեեստրի վարում:**

1.1. Ռեեստրը **Թողարկողի**, վերջինիս կողմից թողարկված անվանական արժեթղթերի, այդ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) և դրանցով հավաստված իրավունքների վերաբերյալ տվյալների միասնական համակարգ է, որն ապահովում է արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի), նրանց լիազորված ներկայացուցիչների, գրանցված սեփականատերերին (անվանատերերին) պատկանող (անվանատերերի անվամբ գրանցված) արժեթղթերի քանակի և դասի, ինչպես նաև դրանց վերաբերյալ սույն կանոններով սահմանված այլ տեղեկությունների նույնացումը:

1.2. Ռեեստրի վարման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման համար հաճախորդ իրավաբանական անձից պահանջվող փաստաթղթերն են.

1.2.1. Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը՝ վավերացված և «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը,

1.2.2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում) կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ թողարկողների դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

1.2.3. Թողարկողի գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները հաստատող փաստաթղթի պատճենը՝ վավերացված և «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ,

1.2.4. Թողարկողի գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաղտաթղթի պատճենը վավերացված և «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ,

1.2.5. Տեղեկանք արժեթղթերի հավաստագրերի առկայության (տպագրման) մասին,

1.2.6. Ավարտված և արդյունքներն ամրագրած տեղաբաշխման գործընթացի արդյունքում ձևավորված արժեթղթերի (առկայության դեպքում) սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակները՝ ներառելով նաև տեղեկություններ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ: Ընդ որում ներկայացվող ցուցակում պարտադիր լրացման ենթակա են Սեփականատիրոջ/անվանատիրոջ ազգանունը (իրավաբանական անձանց համար՝ անվանում), Սեփականատիրոջ/անվանատիրոջ անունը և անձնագրի կամ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի տվյալները՝ ըստ յուրաքանչյուր սեփականատիրոջ/անվանատիրոջ: Փաստաթղթային տարբերակը պետք է վավերացված լինի Թողարկողի կնիքով (առկայության

դեպքում) և ստորագրված՝ գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից՝ համապատասխան լիազորագրի առկայության դեպքում: Ցուցակը կամ դրան ուղեկցող գրությունը պետք է նաև պարունակի դրույթ, որ տեղեկությունները ներառված են լավագույն իրազեկվածության պայմաններում (ցուցակի ձևը սահմանված է ՀԿԴ կանոններով), իսկ եթե առկա են նաև տեղեկություններ արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ, ապա ցուցակին կից պետք է ներկայացվեն նաև այդ սահմանափակումների հիմք հանդիսացող փաստաթղթերը կամ դրանց պատճենները,

1.2.7. Եթե Ռեեստրի վարման պայմանագիր կնքելիս Թողարկողն իրականացնում է նախկինում տեղաբաշխված արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխում, որի գործընթացը դեռ չի ավարտվել կամ Թողարկողի հետ կնքվում է այնպիսի արժեթղթերի Ռեեստրի վարման պայմանագիր, որոնց տեղաբաշխումը դեռ չի իրականացվել կամ ավարտվել՝ այսինքն տեղաբաշխման ենթակա արժեթղթերի վաճառքի գործընթացը դեռ չի իրականացվել, իրականացվել է մասամբ կամ տվյալ արժեթղթերի տեղաբաշխման արդյունքները դեռ չեն ամրագրվել, ապա Թողարկողը Բանկին տեղեկություններ է ներկայացնում տեղաբաշխվող արժեթղթերի բնութագրիչների (դասը/տեսակը, քանակը, անվանական արժեքը և այլն), տվյալ արժեթղթերի թողարկման որոշման, տեղաբաշխման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ, նկատի ունենալով, որ արժեթղթերի տեղաբաշխման գործառնությունը Համակարգում գրանցվում է Ռեեստրի վարման պայմանագիր կնքելուց հետո՝ ՀԿԴ կանոններով սահմանված կարգով,

1.2.8. Ռեեստրավարման ենթակա արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրի (ԱՄՏԾ) և/կամ արժեթղթերի նույնականացնող ծածկագրի (ԱՆԾ) շնորհման հայտ 2 օրինակից (այսուհետ՝ Հայտ), որը լրացվում և ներկայացվում է համաձայն Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրի շնորհման» կանոնների, կամ տեղեկություններ տվյալ արժեթղթերին Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված և գործող ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի վերաբերյալ, եթե այդպիսիք առկա են, և եթե ԱՄՏԾ-ի կամ ԱՆԾ-ի շնորհման և պահպանման պայմաններով նախկինում ներկայացված տեղեկությունները փոփոխված չեն,

1.2.9. Թողարկողի ցանկությամբ լիազորված անձ (անձինք) ունենալու դեպքում՝ լիազորված անձի (անձանց) անձը հաստատող փաստաթղթի պատճենը վավերացված և «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ և լիազորագիր, որով հաստատվում են վերջինիս իրավասությունների շրջանակը,

1.2.10. կանոնադրության 1 պատճեն՝ կարված և կնքված, «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ ,

1.2.11. Թողարկողի կոնտակտային տվյալներ,

1.2.12. Բանկի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

1.3. Թողարկողը Բանկի հետ կարող է վերակնքել ռեեստրի վարման պայմանագիր, եթե այն նախկինում կնքված է եղել Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կամ մեկ այլ հաշվի օպերատորի (ՀՕ) հետ: Բանկի հետ ռեեստրի վարման

պայմանագրի վերակնքման դեպքում թողարկողը ՀԿԴ-ի կամ ՀՕ-ի հետ որևէ պարտավորություն չպետք է ունենա, իսկ ունենալու դեպքում պետք է ամբողջությամբ մարի պարտավորությունը և վերակնքի պայմանագիրը: ՀԿԴ-ի նկատմամբ պարտավորություն ունեցող թողարկողների ցանկը հրապարակվում է ՀԿԴ-ի կայք էջում (www.cda.am):

1.4. Ռեեստրի վարման պայմանագրի կնքման (վերակնքման) դեպքում գործում է ստորև ներկայացվող սակագինը.

Ռեեստրի վարման պայմանագրի կնքում (ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում, եթե նախկինում կնքված է եղել ՀԿԴ-ի հետ)	անվճար
Ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով	6,000 ՀՀ դրամ

1.5. Թողարկողի և թողարկողի արժեթղթերի վերաբերյալ սկզբնական տվյալների մուտքագրումը ծրագրային համակարգ, ինչպես նաև թողարկողի մասին փոփոխությունների գրանցումը(թողարկողի գտնվելու վայրի, բաժնետիրական ընկերության տեսակի, տնօրենի, ընկերության անվանման կամ արժեթղթերի(փաստաթղթայինից ոչ փաստաթղթային ձևի կամ հակառակը) մասին) կատարվում է անվճար:

1.6. Թողարկողների հետ ռեեստրի վարման պայմանագրի կնքման օրվանից հաշվարկվում է սակագին՝ արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար ըստ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակի(պարտատոմսերի դեպքում ըստ ընդհանուր անավանական արժեքի) ամսական կտրվածքով՝

1.6.1. Բաժնային արժեթղթերի (փայերի) հաշվառման (սեփականտերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում) համար.

1-ից 5-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	6,000 ՀՀ դրամ
6-ից 49-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	10,000 ՀՀ դրամ
50-ից 99-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	14,000 ՀՀ դրամ
100-ից 199-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	19,000 ՀՀ դրամ
200-ից 499-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	23,000 ՀՀ դրամ
500-ից 999-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	28,000 ՀՀ դրամ
1,000 և ավել տեղաբաշխված արժեթղթերի	50,000 ՀՀ դրամ

(փայերի) հաշիվների քանակ	

1.6.2. Պարտատոմսերի հաշվառման (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում) համար.

մինչև 1,550,000,000 ՀՀ դրամը	0.003%
1,550,000,000 ՀՀ դրամից ավել	45,000 ՀՀ դրամ

1.7. Արտարժույթով արտահայտված անվանական արժեք ունեցող պարտատոմսերի հաշվառման (արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման և պահպանման) սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ամսվա վերջին օրվա համար Կենտրոնական Բանկի կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով:

1.8. **Սակագնի գանձումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը: Ռեեստրի վարման ծառայության մատուցման առաջին և վերջին ամսվա միջնորդավճարները գանձվում են ամսվա փաստացի օրերի հաշվարկով: Թողարկողի կողմից վերոնշյալ սակագներով սահմանված ժամկետներում նախատեսված վճարները երեք ամիս անընդմեջ չկատարման, ուշացման կամ մասամբ կատարման դեպքում Բանկը տվյալ վճարման պարտավորությունը չկատարողի կամ ոչ պատշաճ կատարողի նկատմամբ հաշվարկում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0.2%-ի չափով, ինչպես նաև երեք ամիս անընդմեջ միջնորդավճարների չկատարման կամ դատարանի ուժի մեջ մտած վճռով թողարկողի սնանկ ճանաչվելու դեպքում Բանկը իրավունք ունի կասեցնել թողարկողին մատուցվող ծառայությունները:**

1.9. **Թողարկողի հետ ռեեստրի վարման պայմանագրի կնքման կամ վերակնքման պահից 3 աշխատանքային օրվա կամ թողարկողի հետ համաձայնեցված ավելի երկար ժամկետի ընթացքում բանկը թողարկողին անվճար տրամադրում է արժեթղթերի գրանցված սեփականտերերի (անվանատերերի) ցուցակ:**

1.10. Բացառությամբ 1.9 կետով սահմանված ժամկետից հետո ցուցակի կամ տեղականքի տրամադրման համար գործում է ստորև ներկայացվող սակագինը.

Ցուցակի տրամադրում էլեկտրոնային եղանակով	1,200ՀՀ դրամ
Ցուցակի տրամադրում թղթային եղանակով	մինչև 500 բաժնետերերերի (փայատերերի) դեպքում 1,200 ՀՀ դրամ
	500 և ավելի բաժնետերերերի (փայատերերի) դեպքում 3,600 ՀՀ դրամ
Ցուցակի տրամադրում փոստային եղանակով	մինչև 500 բաժնետերերերի (փայատերերի) դեպքում 1,200 ՀՀ դրամ

	500 և ավելի բաժնետերերերի (փայատերերի) դեպքում 4,800 ՀՀ դրամ
Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի) (էլեկտրոնային եղանակով)	6,000 ՀՀ դրամ
Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի) (թղթային եղանակով)	8,400 ՀՀ դրամ
Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով) (էլեկտրոնային եղանակով)	14,400 ՀՀ դրամ
Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով) (թղթային եղանակով)	18,000 ՀՀ դրամ
Այլ տեղեկանքների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով) (էլեկտրոնային եղանակով)	16,800 ՀՀ դրամ
Այլ տեղեկանքների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով) (թղթային եղանակով)	24,000 ՀՀ դրամ
Այլ տեղեկանքների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի) (էլեկտրոնային եղանակով)	9,600 ՀՀ դրամ
Այլ տեղեկանքների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման)	

վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի) (թղթային եղանակով)	12,000 ՀՀ դրամ

1.11. Բանկը իրականացնում է նաև արժեթղթերի տեղաբաշխման և կորպորատիվ գործողությունների հետ կապված գործառնություններ.

Ոչ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի)գրանցման հաշվառում	մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը	0.09%
	3,000,000,000 ՀՀ դրամից ավել	2,760,000 ՀՀ դրամ
Ոչ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	մինչև 30,000,000,000 ՀՀ դրամը	0.015%
	30,000,000,000 ՀՀ դրամից ավել	2,760,000 ՀՀ դրամ
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի(փայերի) գրանցման հաշվառում	մինչև 1,000,000,000 ՀՀ դրամը	0.09%
	1,000,000,000 ՀՀ դրամից ավել	840,000 ՀՀ դրամ
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	մինչև 4,000,000,000 ՀՀ դրամը	0.009%
	4,000,000,000 ՀՀ դրամից ավել	360,000 ՀՀ դրամ
Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի	մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը	0.09% նվազագույնը 24,000 ՀՀ դրամ
	3,000,000,000 ՀՀ դրամից ավել	3,600,000 ՀՀ դրամ
Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	մինչև 3,000,000,000 ՀՀ դրամը	0.01% նվազագույնը՝ 24,000 ՀՀ դրամ
	3,000,000,000 ՀՀ դրամից ավել	300,000 ՀՀ դրամ

1.12. Թողարկողի արժեթղթերի հաշվի բացումը անվճար է:

1.13. ՀԿԴ-ի կողմից Բանկի միջնորդությամբ թողարկողներին մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագինը ներկայացվում է ստորև.

Շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար/ յուրաքանչյուր գործընթացի համար	0.3% նվազագույնը 28,000 ՀՀ դրամ
Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված/բաշխված դրամական միջոցների գումարը յուրաքանչյուր գործընթացի համար	0.03% նվազագույնը 28,000 ՀՀ դրամ
Ծանուցում թողարկողին արժեթղթերի (փայերի) գործառնությունների մասին (արժեթղթերի (փայերի) փոխանցման հանձնարարականների և արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ)	տարեկան	240,000 ՀՀ դրամ
Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում	տարեկան	1,200,000 ՀՀ դրամ

2. **Արժեթղթերի պահառություն:**

2.1. **Արժեթղթերի պահառությունը** արժեթղթերի պահպանության և վերջիններիս նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների հաշվառման և փոխանցման գործունեություն է:

2.2. Արժեթղթերի և դրանցով կապված գործառնությունների հաշվառման համար Բանկը բացում է արժեթղթերի հաշիվների հետևյալ տեսակները.

2.2.1. Սեփական արժեթղթերի հաշիվ, որը բացվում է անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու նպատակով,

2.2.2. Անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ, որը բացվում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ պահառուների անունով այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար,

2.2.3. Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ, որը բացվում է օտարերկրյա պահառուների համար այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար,

2.2.4. Թողարկողի արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են Թողարկողի տիրապետման տակ գտնվող (այդ թվում՝ ձեռքբերված կամ հետգնված) իր կողմից տեղաբաշխված արժեթղթերը,

2.2.5. Բաժնային սեփականության արժեթղթերի հաշիվ, որը ընդհանուր սեփականության հաշիվ է, և որում հաշվառվում են մեկից ավելի անձանց պատկանող արժեթղթերը՝ սահմանված բաժնային համամասնության սկզբունքով,

2.2.6. Համատեղ սեփականության արժեթղթերի հաշիվ, որը ընդհանուր սեփականության հաշիվ է, որում հաշվառվում են մեկից ավելի անձանց համատեղ սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը:

2.3. Արժեթղթերի հաշիվները կարող են ունենալ հետևյալ կարգավիճակներից որևէ մեկը.

2.3.1. Ժամանակավոր հաշվի կարգավիճակ՝ Բանկի կողմից դեռևս չվերաբացված, ինչպես նաև Թողարկողի կողմից ռեեստրի վարման պայմանագրի կնքման շրջանակներում ներկայացրած տվյալների (անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի) հիման վրա Համակարգում բացված արժեթղթերի հաշիվ:

2.3.2. նույնականացված հաշվի կարգավիճակ՝ տրվում է Բանկի կողմից արժեթղթերի ժամանակավոր հաշվի վերաբացման գործառնության իրականացման ընթացքում չնույնականացված Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվին:

2.3.3. Ակտիվ հաշվի կարգավիճակ՝ տրվում է Բանկի կողմից բացված կամ վերաբացված հաշվին:

2.3.4. Ժառանգատուի հաշվի կարգավիճակ, որը տրվում է Բանկի կողմից բացած (վերաբացված) այն հաշվին, որից պետք է իրականացվի ժառանգության գրանցման արդյունքում արժեթղթերի փոխանցում իրավահաջորդ ժառանգ հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվին:

2.4. Բանկի կողմից Հաշվետիրոջ համար արժեթղթերի հաշիվ կարող է բացվել հետևյալ 2 եղանակներից որևէ մեկով՝

2.4.1. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից բացված և ժամանակավոր հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշվի վերաբացմամբ,

2.4.2. Արժեթղթերի նոր հաշվի բացմամբ:

2.5. **Հաշվի բացումը (վերաբացումը), փակումը, ինչպես նաև հաշվում ներառված տեղեկությունների փոփոխությունը կատարվում է անվճար:**

2.6. Հաշվի բացման (վերաբացման) համար, բացառությամբ ժառանգատուի հաշվի վերաբացման դեպքի, ֆիզիկական անձ հանդիսացող Հաշվետերը կամ նրա լիազորված անձը պետք է Բանկին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

2.6.1. Հաշվետիրոջ անձը հաստատող փաստաթուղթը

2.6.2. Հաշվետիրոջ հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթուղթը (սոցիալական քարտը) կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքը,

2.6.3. հաշվի վերաբացման դեպքում՝ Հաշվետիրոջ նույնականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

2.6.4. լիազորված անձի դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը վավերացված նոտարական կարգով և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը,

2.6.5. Բանկի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

2.7. Հաշվի բացման (վերաբացման) համար իրավաբանական անձ հանդիսացող Հաշվետիրոջ լիազորված անձը պետք է Բանկին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

2.7.1. Հաշվետիրոջ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը վավերացված և «Իսկականի հետ ճիշտ է մակագրությամբ» կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը,

2.7.2. Կանոնադրության 1 պատճեն՝ կարված և կնքված «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ,

2.7.3. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում) կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ թողարկողների դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

2.7.4. առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի պատճենը վավերացված և «Իսկականի հետ ճիշտ է մակագրությամբ»,

2.7.5. իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի՝ անձը հաստատող փաստաթուղթը,

2.7.6. լիազորագրի հիման վրա գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը վավերացված նոտարական կարգով,

2.7.7. մասնակիցների վերաբերյալ տեղեկանքը (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ), եթե մասնակիցների վերաբերյալ տեղեկությունը (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) ներառված չէ կանոնադրությունում) կամ գրություն այն մասին, որ կանոնադրության վերջին փոփոխության գրանցումից հետո մինչ հաշվի բացման (վերաբացման) հանձնարարականի ներկայացման օրը մասնակիցների կազմում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել,

2.7.8. կոնտակտային տվյալներ,

2.7.9. Բանկի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

2.8. Անվանատիրոջ (պահառության գործունեություն իրականացնող Համակարգի ուղղակի մասնակից, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը) հաշվի բացման համար Պահառուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

2.8.1. ենթապահառության պայմանագրի կնքման համար անհրաժեշտ վավերապայմանները՝ այդ թվում իրավասու էլեկտրոնային հասցեն (առկայության դեպքում), բանկային վավերապայմանները,

2.8.2. Օրենքով սահմանված պահառություն իրականացնելու թույլտվության ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված տեղեկացման կամ լիցենզիայի պատճենը (Օտարերկրյա պահառուի դեպքում՝ իր երկրի պետական մարմնի կողմից տրված թույլտվության կամ լիցենզիայի պատճենը, որի համաձայն օտարերկրյա պահառուն իրավունք ունի իր անունով այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ վարել),

2.8.3. պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով),

2.8.4. Պահառուի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնի նշանակումը հավաստող փաստաթղթի պատճենը,

2.8.5. Պահառուի լիազորված անձի լիազորությունները հավաստող փաստաթուղթը (բնօրինակը կամ պատճենը վավերացված և «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ), որն առնվազն ապահովում է լիազորված անձի նույնականացումը և հստակ նախատեսում է լիազորությունների շրջանակը,

2.9. Բանկը Սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի բացման համար Հաշվետիրոջ հետ կնքում է արժեթղթերի պահառության գրավոր պայմանագիր (Օրինակելի ձևը սահմանում է ՀԿԴ-ն):

2.10. Բանկում բացված (վերաբացված) հաշվում առկա արժեթղթերի պահպանման համար(յուրաքանչյուր դասի համար առանձին) պայմանագրի կնքման օրվանից գործում է ներքոհիշյալ սակագինը(բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը կամ հրապարակային ֆոնդի փայերը), ընդ որում այն հաշվարկվում է յուրաքանչյուր օրվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական(փայերի դեպքում հաշվարկային)արժեքի վրա.

Մինչև 10,000,000 ՀՀ դրամ անվանական արժեքով փաթեթ	անվճար
10,000,000 ՀՀ դրամը գերազանցող անվանական արժեքով փաթեթ	0,00075%, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ

2.11. Բանկում իրականացվում է ֆոնդի փայերի տեղաբաշխման / բաժանորդագրության և մարման գործառնություններ: Հաշվետեր հաճախորդը և/կամ ներդրումային ֆոնդի կառավարիչը փայերի ձեռք բերման համար բանկին է ներկայացնում ՀԿԴ ներդրումային ֆոնդերի թողարկած փայերի ադմինիստրավորման ծառայությունների մատուցման կանոններով սահմանված տեղաբաշխման / բաժանորդագրության հայտ (հավելված 1, www.cda.am), որն իր հերթին ներկայացվում է 2 սկզբունքով.

2.11.1. **Գլոբալ հայտ.** այն իրենից ներկայացնում է պարբերական բաժանորդագրության հանձնարարական, որով հաճախորդը բաժանորդագրվում է այնքան փայի համար, որքանին համարժեք դրամական միջոցներ ունի բանկի հաճախորդների ամփոփ դրամային հաշվում,

2.11.2. **Մեկանգամյա հայտ.** այն իրենից ներկայացնում է մեկանգամյա բաժանորդագրության հայտ որով հաճախորդը բաժանորդագրվում է այնքան փայի համար, որքան նշված է հայտում:

2.12. Ներդրումային ֆոնդի փայերի տեղաբաշխման նպատակով գնման կամ մարման նպատակով հետգնման հայտի ընդունման և գրանցման համար գործում է ստորև ներկայացվող սակագները, ընդ որում սակագինը գանձվում է հայտը ներկայացրած անձից.

Փայերի տեղաբաշխման նպատակով գնման հայտի ընդունում և գրանցում	յուրաքանչյուր հայտ	1,000 ՀՀ դրամ
Փայերի մարման նպատակով հետգնման հայտի ընդունում և գրանցում	յուրաքանչյուր հայտ	1,000 ՀՀ դրամ

2.13. Բանկում իրականացվում է նաև արժեթղթերի փոխանցման, գրավի իրավունքի գրանցման և արժեթղթերով պայմանավորված այլ գործառնություններ.

2.13.1. Ազատ առաքում կամ ST փոխանցում (ժառանգության և դատարանի վճռի հիման վրա կատարվող արժեթղթերի փոխանցումները շահագրգիռ կողմի պահանջով, ինչպես նաև նվիրատվության (նվիրաբերության) հիման վրա արժեթղթերի փոխանցումները, եթե նվիրատուն ներկայացնում է նվիրատվության պայմանագիրը),

2.13.2. Առաքում վճարման դիմաց (DVP փոխանցում) կամ Ազատ առաքում՝ համաձայնությամբ (FOP փոխանցում) փոխանցում(նվիրատվության (նվիրաբերության) հիման վրա արժեթղթերի փոխանցումները, եթե նվիրատուն չի ներկայացնում նվիրատվության պայմանագիրը): Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման հիմքով Թողարկողի արժեթղթերի հաշվին արժեթղթերի փոխանցումները:

2.13.3. Արժեթղթերի պորտֆելի փոխանցում,

2.13.4. Արժեթղթերի գրավի իրավունքի գրանցում / գրավի իրավունքի դադարեցում,

2.13.5. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում / սառեցման դադարեցում,

2.13.6. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում / սահմանափակման դադարեցում:

2.13.7. Ռեպո / հակադարձ ռեպո:

2.13.8. Կարգավորող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում / կարգավորող շուկայում առևտրի նպատակով դրամական միջոցների դեպոնացում:

2.14. Ստորև ներկայացվում է բանկի կողմից կատարվող վերոնշյալ գործարքների սակագները.

Բաժնետոմսերի փոխանցում(ներառյալ՝ ազատ առաքումը համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում հաշվարկային) արժեք (վճարում է փոխանցող կողմը կամ շահագրգիռ կողմը)	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամ	0,12%, նվազագույնը 2,000 ՀՀ դրամ
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել	3,300,000 ՀՀ դրամ
Պարտատոմսերի փոխանցում(ներառյալ՝ ազատ առաքումը համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք(վճարում է փոխանցող կողմը կամ շահագրգիռ կողմը)	Մինչև 4,000,000,000 ՀՀ դրամ	0,015%, նվազագույնը 2,000 ՀՀ դրամ
		4,000,000,000 ՀՀ դրամից ավել	450,000 ՀՀ դրամ
Բաժնետոմսերի (փայերի) DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում հաշվարկային) արժեք (վճարում է յուրաքանչյուր կողմը)	Մինչև 1,000,000 ՀՀ դրամ	2,400 ՀՀ դրամ
		1,000,000-ից 2,000,000,000 ՀՀ դրամ	0.25%
		2,000,000,000 ՀՀ դրամից ավել	3,600,000 ՀՀ դրամ
Պարտատոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք(վճարում է յուրաքանչյուր կողմը)	Մինչև 10,000,000 ՀՀ դրամ	2,200 ՀՀ դրամ
		10,000,000-ից 2,000,000,000 ՀՀ դրամ	0.02%
		2,000,000,000 ՀՀ դրամից ավել	480,000 ՀՀ դրամ

Պորտֆելի փոխանցում	Վճարումը իրականացնում է փոխանցող կողմը		6,000 ՀՀ դրամ
Բաժնետոմսերի գրավադրում	Գրավի առարկա բաժնետոմսերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում հաշվարկային) արժեք(վճարում է գրավատուն կամ շահագրգիռ կողմը)	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամ	0.1% նվազագույնը 3,600 ՀՀ դրամ
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել	3,000,000 ՀՀ դրամ
Պարտատոմսերի գրավադրում	Գրավի առարկա պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք(վճարում է գրավատուն կամ շահագրգիռ կողմը)	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամ	0.02% նվազագույնը 2,400 ՀՀ դրամ
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել	600,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի գրավի արտադատական իրացում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում հաշվարկային) արժեք /վճարումը իրականացնում է գրավառուն	մինչև 140,000,000 ՀՀ դրամը	0.4%
		140,000,000 ՀՀ դրամից ավել	420,000 ՀՀ դրամ
Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում	Քվեարկելու իրավունքը սահմանափակած արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	0.5% նվազագույնը 5000 ՀՀ դրամ	
Սառեցում	Սառեցված արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում հաշվարկային) արժեք (վճարում է հաշվետերը)	Մինչև 3,000,000,000 ՀՀ դրամ	0.075% նվազագույնը 6,000 ՀՀ դրամ
		3,000,000,000 ՀՀ դրամից ավել	3,000,000 ՀՀ դրամ
Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում	Գրավադրված, սառեցված, առևտրային նպատակով արգելադրված և այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	անվճար	
Ռեպո կամ Հակադարձ ռեպո	Հանձարարագիր/ վճարումը իրականացնում է	7,200 ՀՀ դրամ	

գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում	յուրաքանչյուր կողմը	
Կարգավորող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում		անվճար
Կարգավորող շուկայում առևտրի նպատակով դրամական միջոցների դեպոնացման գրանցումը Համակարգում		անվճար

2.15. Բանկի հետ պահառության պայմանագիր կնքած անձը իրավունք ունի համակարգից ստանալ հետևյալ տեղեկությունները.

2.15.1. Քաղվածք արժեթղթերի հաշվից, որը ներառում է արժեթղթերի հաշվում առկա միայն մեկ դասի կամ տեսակի արժեթղթի մասով տվյալներ ,

2.15.2. Հաշվետվություն իր արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ, որը ներառում է տեղեկություններ արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի մնացորդի վերաբերյալ ,

2.15.3. Հաշվետվություն արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ,

2.15.4. Հաշվետվություն արժեթղթերի հաշվում գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ:

2.16. Վերոնշյալ տեղեկություններից յուրաքանչյուրի տրամադրման համար բանկում գործում է ներքոնշյալ սակագներից որևէ մեկը (բացառությամբ գործարք կատարելու ժամանակ տրամադրված քաղվածքի , որը անվճար է).

Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում՝ հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի մասով (ռեեստրից քաղվածք))	1,200 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվի մնացորդի	Յուրաքանչյուր արժեթղթերի դասի

վերաբերյալ հաշվետվության տրամադրում	համար 1,000 ՀՀ դրամ, նվազագույնը՝ 1,200 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ ըստ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	2,000 ՀՀ դրամ
Հաշվետվություն արժեթղթերի հաշվում գրանցված գրավի իրավունքներիի վերաբերյալ	Յուրաքանչյուր արժեթղթերի դասի համար 1,000 ՀՀ դրամ, նվազագույնը՝ 1,200 ՀՀ դրամ

2.17. Բանկը հաշվետիրոջ հարցման հիման վրա (բացառությամբ գործարքների վերաբերյալ տեղեկությունների հարցումների) տրամադրում է նաև տեղեկանք, որի համար գործում է ստորև ներկայացվող սակագինը.

Տեղեկանքի տրամադրում էլեկտրոնային եղանակով	6,000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրում թղթային եղանակով	12,000 ՀՀ դրամ

2.18. Ստորև ներկայացվում է անվանատիրոջ հաշիվների և օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման և այդ արժեթղթերով գործարքների սպասարկման ծառայությունների (ծառայությունների շրջանակը կարող է տարբերվել՝ կախված օտարերկրյա պահառուից) սակագները.

Անվանատիրոջ հաշիվների բացման և հաշվում առկա արժեթղթերի պահպանման հետ կապված ծառայություններ		
Հաշվի օպերատոր չհանդիսացող անձի համար		
Անվանատիրոջ հաշվի բացում	արժեթղթերի հաշիվ	360,000 ՀՀ դրամ
Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի պահպանում	Յուրաքանչյուր օրվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության	0.001%

	իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում հաշվարկային)արժեք	
Հաշվի օպերատոր հանդիսացող անձի համար		
Անվանատիրոջ հաշվի բացում	արժեթղթերի հաշիվ	Անվճար
Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի պահպանում	Յուրաքանչյուր օրվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում հաշվարկային)արժեք	0.001%
Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման և այդ արժեթղթերով գործարքների սպասարկման ծառայություններ. (ծառայությունների շրջանակը կարող է տարբերվել՝ կախված օտարերկրյա պահառուից)		
Արժեթղթերի պահպանման ծառայություն		
Բաժնային արժեթղթերի (այդ	Սեփականատիրոջ	Կենտրոնական

թվում՝ ֆոնդի փայերի) պահպանում	(անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ/ ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)	դեպոզիտարիային օտարերկրյա պահառուի կողմից հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 40% հավելագին
Պարտքային արժեթղթերի պահպանում (բացառությամբ ՀՀ անունից թողարկված եվրոպարտատոմսերի)		
ՀՀ անունից թողարկված եվրոպարտատոմսերի պահպանում		0.002%
Կորպորատիվ գործողություններ		
Արժեթղթերից ստացվող եկամուտների մուտքագրում հաշվին	Սեփականատիրոջ (անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ/ ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառուի կողմից ներկայացված սակագին (ներառյալ հարկերը) + 48% հավելագին
Արժեթղթերի մարում	Ըստ յուրաքանչյուր գործառնության	
Շահութաբաժինների վճարում		
Այլ պարտադիր գործողություններ		
Ոչ պարտադիր գործողություններ		
Ռայթերի առք և վաճառք	Գործարքի առարկա արժեթղթերի ծավալ	
Ժողովներին հեռակա մասնակցության ապահովում		
Ծանուցումների ստացում	Ըստ յուրաքնչյուր ժողովի	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառուի կողմից ներկայացված սակագին (ներառյալ հարկերը) + 48% հավելագին
Օրակարգի ստացում		
Մուտքի քարտի պատվիրում		
Քվեարկության հանձնարարականի կատարում		
Արժեթղթերով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ (Վերջնահաշվարկի ենթակա, սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար)		

Պարտքային, բաժնային արժեթղթերով և ֆոնդի փայերով վերջնահաշվարկի հանձնարարականի կատարում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառուի կողմից ներկայացված սակագին (ներառյալ հարկերը) + 48% հավելագին
Սխալ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	
Արժեթղթերի ֆիզիկական առաքման կամ ստացման հետ կապված ծախսեր (ներառյալ ապահովագրությունը)	Ըստ յուրաքանչյուր դեպքի	
Վերջնահաշվարկի խմբային հանձնարարականի (group matching) կատարում	Ըստ յուրաքանչյուր գործարքի	
Դրամական միջոցներով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ (Վերջնահաշվարկի ենթակա, սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար)		
Դրամական միջոցների մուտքագրման և ելքագրման հանձնարարականների կատարում (ներառյալ՝ preadvice հանձնարարականները)	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառուի կողմից ներկայացված սակագին (ներառյալ հարկերը) + 48% հավելագին
Դրամական միջոցներով գործառնություններ առանց հանձնարարականի	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	
Սխալ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	
Հաշվետվությունների տրամադրում		
Կորպորատիվ գործողությունների ծանուցում	Ըստ յուրաքանչյուր ծանուցման	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառուի կողմից ներկայացված սակագին (ներառյալ հարկերը) + 48% հավելագին
Կորպորատիվ գործողությունների հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Ամսական ստացվելիք տոկոսագումարների տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Հաշվում առկա արժեթղթերի	Ըստ յուրաքանչյուր	

վերաբերյալ հաշվետվություն	հաշվետվության	
Դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ այլ հաշվետվություններ	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Գործառնությունների վերաբերյալ տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Սպասվող գործառնությունների տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
վերջնահաշվարկի հաստատման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Արժեթղթերով վարկավորման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Կորպորատիվ գործողությունների ընդհանրական հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հաշվում առկա արժեթղթերի բացվածքի տրամադրում ըստ շուկաների	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հաշվետվությունների ուղարկում փոստով կամ էլ. Փոստով	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հանձնարարականի հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
Վերջնահաշվարկի հանձնարարականի կարգավիճակի հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
Հաշվից ելքագրման կամ հաշվին մուտքագրման հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	

2.19. Սույն ամփոփագրում նշված սակագները չեն ներառում ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) և ենթական են ԱԱՀ-ով հարկման , եթե ՀՀ օրենսդրությամբ դրանք ազատված չեն ԱԱՀ-ից:

2.20. Վերոնշյալ բոլոր ծառայությունները մատուցվում են Բանկի գործունեության բոլոր վայրերում /գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր/:

2.21. Ծառայության հետ կապված հարցերը պարզաբանելու համար հաճախորդները կարող են զանգահարել՝ (374 10) 510 910 հեռախոսահամարով: